ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

20 ՄԱՐՏԻ 2025թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 8 անդամներ:

Բացակա էին՝ Կարեն Գաբրիելյանը, Մանուկ Բաղդասարյանը, Արամ Մկրտչյանը, Արամ Խաչատրյանը, Սիրակ Հովակիմյանը, Արամ Հովսեփյանը, Գարեգին Մարգարյանը

Քաղաքապետի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Արտակ Նազարյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Տիգրան Պողոսյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Լիպարիտ Թադեվոսյանը

ԼՍԵՑԻՆ

ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԼԻՊԱՐԻՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ)

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասը, 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի, ***Գառնի համայնքի ավագանին որոշում է՝***

1. Ընդունել Գառնի համայնքի ավագանու կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

2. ՈՒԺը կորցրած ճանաչել Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու 2021թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին» թիվ 65-Ն որոշումը

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ԼՍԵՑԻՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(Զեկ. ԼԻՊԱՐԻՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912 որոշմամբ հաստատված կարգի 33 կետի <<զ>> ենթակետով, 33.1 կետի <<բ>> ենթակետով 33.2 կետով հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը և կառույցներն իրականացրած անձի դիմումը, ***Գառնի համայնքի ավագանին որոշում է՝***

1. Կոտայքի մարզի Գառնի համայնքի Գառնի գյուղի 8-րդ թաղամաս 8-րդ փողոց 1-ին փակուղի թիվ 3/1 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն համարվող 07-021-0096-0056 ծածկագրով օրինականացված ինքնակամ կառույցն ու համապատասխան հողամասը նախապատվության իրավունքով՝ ուղղակի վաճառքի կարգով վաճառել տվյալ կառույցն իրականացնող Երազիկ Ներսիսյանին:

2. Ուղղակի վաճառքի գին սահմանել Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշմամբ սահմանված կարգով. (հող 0.00471 հա արժեքը 136010 ՀՀ դրամ, շենք.շինության 38.31քմ արժեքը 192280 ՀՀ դրամ)

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԼՍԵՑԻՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(Զեկ. ԼԻՊԱՐԻՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912 որոշմամբ հաստատված կարգի 33 կետի <<զ>> ենթակետով, 33.1 կետի <<բ>> ենթակետով 33.2 կետով հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը և կառույցներն իրականացրած անձի դիմումը, ***Գառնի համայնքի ավագանին որոշում է՝***

1. Կոտայքի մարզի Գառնի համայնքի Գողթ գյուղի 1-ին փողոց թիվ 1/2 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն համարվող 07-026-0118-0080 ծածկագրով օրինականացված ինքնակամ կառույցն ու համապատասխան հողամասը նախապատվության իրավունքով՝ ուղղակի վաճառքի կարգով վաճառել տվյալ կառույցն իրականացնող Աշոտ Առաքելյանին:

Ուղղակի վաճառքի գին սահմանել Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշմամբ սահմանված կարգով. (հող 0.02449 հա արժեքը 459850 ՀՀ դրամ, շենք.շինության 115.1քմ արժեքը 491020 ՀՀ դրամ)

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԼՍԵՑԻՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(Զեկ. ԼԻՊԱՐԻՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912 որոշմամբ հաստատված կարգի 33 կետի <<զ>> ենթակետով, 33.1 կետի <<բ>> ենթակետով 33.2 կետով հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը և կառույցներն իրականացրած անձի դիմումը, ***Գառնի համայնքի ավագանին որոշում է՝***

1. Կոտայքի մարզի Գառնի համայնքի Հացավան գյուղի 4-րդ փողոց թիվ 1/1 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն համարվող 07-041-0002-0025 ծածկագրով օրինականացված ինքնակամ կառույցն ու համապատասխան հողամասը նախապատվության իրավունքով՝ ուղղակի վաճառքի կարգով վաճառել տվյալ կառույցն իրականացնող Շավարշ Սարգսյանին:

2. Ուղղակի վաճառքի գին սահմանել Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշմամբ սահմանված կարգով. (հող 0.00934 հա արժեքը 269670 ՀՀ դրամ, շենք.շինության 5.18քմ արժեքը 14740 ՀՀ դրամ)

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԼՍԵՑԻՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(Զեկ. ԼԻՊԱՐԻՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912 որոշմամբ հաստատված կարգի 33 կետի <<զ>> ենթակետով, 33.1 կետի <<բ>> ենթակետով 33.2 կետով հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը և կառույցներն իրականացրած անձի դիմումը, ***Գառնի համայնքի ավագանին որոշում է՝***

1. Կոտայքի մարզի Գառնի համայնքի Գողթ գյուղի Գեղարդի Խճուղի1-ին նրբանցք 7/1 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն համարվող 07-026-0001-0084

ծածկագրով օրինականացված ինքնակամ կառույցն ու համապատասխան հողամասը նախապատվության իրավունքով՝ ուղղակի վաճառքի կարգով վաճառել տվյալ կառույցն իրականացնող Սևակ Հովհաննիսյանին:

2. Ուղղակի վաճառքի գին սահմանել Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշմամբ սահմանված կարգով. (հող 0.10578 հա արժեքը 1986240 ՀՀ դրամ, շենք.շինության 185.63քմ արժեքը 791900 ՀՀ դրամ)

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԼՍԵՑԻՆ

ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԼԻՊԱՐԻՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Հարկային օրենսգրքի» 230-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և «ԳԱՌՆԻ ԳԱՐԴԵՆ» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Բաղդասարյանի դիմում ***Գառնի համայնքի ավագանին որոշում է՝***

1. Անշարժ գույքի հարկից ազատել Կոտայքի մարզի Գառնի համայնքի Գառնի գյուղում գտնվող «ԳԱՌՆԻ ԳԱՐԴԵՆ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 07-021-0325-0110 27.3285 հա և 07-021-0220-0150 38.4349 հա հողատեսքերի վրա նոր հիմնված և երիտասարդ պտղատու այգիները՝ մինչև տնկարաների յուրաքանչյուր տեսակի համար՝ ըստ ագրոտեխնիկական ցուցումների լրիվ պտղաբերության հասնելու տարին ներառյալ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԼՍԵՑԻՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(Զեկ. ԼԻՊԱՐԻՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ)

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N 16-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի ***ավագանին որոշում է***

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի վարչական սահմաններում ընդգրկվող՝ պետական սեփականություն հանդիսացող 07-021-0383-0047 կադաստրային ծածկագրով 0.0736 հա գյուղատնտեսական այլ հողամասի վարձակալության վերաբերյալ:

2.Հրապարակային սակարկության մեկնարկային գինը սահմանել 600000 (Վեց հայրուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ 10 (տաս) տարի ժամկետով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԼՍԵՑԻՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(ՁԵԿ. ԼԻՊԱՐԻՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ)

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N 16-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի ***ավագանին որոշում է***

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի վարչական սահմաններում ընդգրկվող՝ պետական սեփականություն հանդիսացող 07-021-0383-0065 կադաստրային ծածկագրով 0.02049 հա գյուղատնտեսական այլ հողամասի վարձակալության վերաբերյալ:

2.Հրապարակային սակարկության մեկնարկային գինը սահմանել 400000 (Չորս հայրուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ 10 (տաս) տարի ժամկետով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՁԵԿ. ԼԻՊԱՐԻՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով Վիգեն Կարոյի Կարապետյանի դիմում խնդրանքը ***համայնքի ավագանին որոշում է՝***

Թույլատրել համայնքի ղեկավարին՝ քաղաքացիներ Վիգեն Կարոյի Կարապետյանի սեփականության իրավունքով պատկանող Գառնի համայնքի Հացավան գյուղում գտնվող 07-021-0089-0190 կադաստրային ծածկագիր 0.73862 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատեսք հողամասին կից, իր կողմից փաստացի օգտագործվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման 07-021-0089-0201 կադաստրային ծածկագրի հողատեսք՝ 0.04436 հա մակերեսով, օտարել նրան ուղղակի վաճառքի ձևով, կադաստրային արժեքով՝ /1.286.440/ ՀՀ դրամ հողամասի ընդլայնման նպատակով:

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԼԻՊԱՐԻՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով <<ԷԿՈՏՈՄԱՏՈ>> ՓԲԸ-ի դիմում խնդրանքը, ***համայնքի ավագանին որոշում է՝***

Թույլատրել համայնքի ղեկավարին՝ քաղաքացի <<ԷԿՈՏՈՄԱՏՈ>> ՓԲԸ-ի սեփականության իրավունքով պատկանող Գառնի համայնքի Գառնի գյուղում գտնվող 07-026-0105-0100 կադաստրային ծածկագիր 1.2063 հա մակերեսով գյուղատնտեսական վարելահող հողատեսք հողամասին կից, իր կողմից փաստացի օգտագործվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական այլ, վարելահող 07-026-0105-0101 կադաստրային ծածկագրի հողատեսք՝ 0.5244 հա մակերեսով, օտարել նրան ուղղակի վաճառքի ձևով, կադաստրային արժեքով՝ /168840/ ՀՀ դրամ հողամասի ընդլայնման նպատակով:

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀՐԱՏԱՊ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԼԻՊԱՐԻՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, <<Գնումների մասին>> օրենքի 16-րդ հոդվածի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Գառնի համայնքի Գառնիի համայնքապետարանի կարիքների համար գնումների համակարգման ծառայությունների ձեռքբերման նպատակով գնման ձևը համաձայն <<Գնումների մասին>> օրենքի համայնքի գնումների պլանով նախատեսվել է բաց մրցույթ, ըստ որի մրցույթի հրավերը պաշտոնական կայքում հրապարակելու օրվանից մինչև պայմանագրի կնքման գործընթացը տևում է շուրջ 2 ամիս և հաշվի առնելով սուբվենցիայի ծրագրերի նախնական հայտերի լրամշակման հետ կապված ընթացքը , ***համայնքի ավագանին որոշում է***

Թույլատրել համայնքի ղեկավարին՝ Գառնիի համայնքապետարանի կարիքների համար գնումների համակարգման ծառայությունների ձեռքբերման նպատակով գնումը կատարելու հրատապ բաց մրցույթի եղանակով, առաջարկելով նաև գնումների պլանում կատարելու համապատասխան փոփոխություններ:

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԼԻՊԱՐԻՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 5-րդ մասով՝ ***ավագանին որոշում է՝***

Հաստատել Կոտայքի մարզի Գառնի համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման, համայնքի ղեկավարի ներկայացրած տարեկան հաշվետվությունը, համաձայն հավելվածի

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԼԻՊԱՐԻՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի 1-ին կետով, «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 11-րդ հոդվածով՝ ***ավագանին որոշում է***

Ա. Բնաիրային օգնություն՝ դրամական հատուցմամբ, սննդի, դեղորայքի , հագուստի, կենցաղային անհրաժեշտ իրերի ձերք բերման համար հետևյալ խմբերին պատկանող անձանց ընտանիքներին:

1. Ընտանիքում խնամառու (անչափահաս, հաշմանդամության 1-ին, 2-րդ խումբ ունեցող, 75 և ավելի տարեկան), կամ ոչ աշխատունակ ածանց և աշխատունակների հարաբերակցության բարձր ցուցանիշի առկայություն ունեցող անձանց:

2. Միայնակ կամ անժառանգ տարեցներին,

3. Հաշմանդամության առաջին կամ երկրորդ խումբ կամ ֆունկցիոնալության ծանր կամ խորը սահմանափակում ունեցող անձանց,

4. Հրատապ արձագանք պահանջող իրավիճակում հայտնված անձանց

5. Ծնողազուրկ կամ միակողմանի ծնողազուրկ երեխաներին,

6. Միայնակ մոր երեխաներին

7. Փախստական կամ տեղահաված ընտանիքներին

8. Բնաիրային հատուցման չափը սահմանել առավելագույնը 30000 ՀՀ դրամ:

«Դրամական հատուցումը տրամադրվում է կազմակերպություններին՝ դրանց կողմից մատուցված ծառայությունների ամբողջական կամ մասնակի հատուցման նպատակով դրամական փոխանցումների միջոցով: Դրա անհնարինության դեպքում դրամական հատուցման համար դիմած կամ ստացած անձը հիմնավորում է հատուցման հանգամանքը համապատասխան անդորրագրերով: »

Բ. Ուսման վարձավճարների հատուցում՝տրամադրել հետևյալ խմբերին պատկանող անձանց՝

1. Ընտանիքում խնամառու (անչափահաս, հաշմանդամության 1-ին, 2-րդ խումբ ունեցող, 75 և ավելի տարեկան), կամ ոչ աշխատունակ ամձանց և աշխատունակների հարաբերակցության բարձր ցուցանիշի առկայություն ունեցող անձանց:

2. Հաշմանդամության առաջին կամ երկրորդ կամ ֆունկցիոնալության ծանր կամ խորը սահմանափակում ունեցող անձանց,

3. Հրատապ արձագանք պահանջող իրավիճակում հայտնված անձանց

4. Ծնողազուրկ կամ միակողմանի ծնողազուրկ երեխաներին,

5. Միայնակ մոր երեխաներին

6. Փախստական կամ տեղահավաած ընտանիքներին

Անձը կարող է օգտվել ուսման վարձավճարի հատուցումից, եթե հաշվառված չէ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում կամ եթե հաշվառված է, սակայն չի օգտվում պետության կողմից սահմանված ուսման վարձի վճարման արտոնություններից:

Ուսման վարձավճարների հատուցման չափը սահմանել առավելագույնը՝ 40000 ՀՀ դրամ Հատուցումը տրամադրվում է բնակչի դիմումի համաձայն ՝ հիմք ընդունելով սոցիալական աշխատողի կողմից կարիքի գնահատման արդյունքները և ներկայացված համապատասխան անդորրագիրը: Դրամական հատուցումը կարող է տրամադրվել մեկ տարվա ընթացքում մեկ անգամից ավելի անգամ:

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024ԹՎԱԿԱՆԻ 192-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԼԻՊԱՐԻՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով <<նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի ***համայնքի ավագանին որոշում է***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու 25 դեկտեմբերի 2024 թվականի <<«Գառնիի արվեստի, մշակույթի և սպորտի կենտրոն» արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության>> N 192-Ա որոշման N 3 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

Ավագանու անդամներ

ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ԱԼԻԿ ԱԼՈՅԱՆ

ԺՈՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՆԱԻՐԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐՏՅՈՄ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀՄԱՅԱԿ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ՏԻՐԱՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ԱՐՍԵՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Համայնքի ղեկավար՝ ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Լիպարիտ Թադեվոսյանը